

Արձանագրություն № 2 (317)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019 թ-ի սեպտեմբերի 17-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 22-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

1. Գիտական խորհրդի կազմում փոփոխությունների մասին:
2. 2019-2020 ուս. տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:
3. 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:
4. Մոսկվայի կառավարության կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:
5. ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:
6. Միասնական քննությունների ծրագրի մասին:
7. Միջազգային գիտաժողովի նախապատրաստման աշխատանքների մասին:
8. Պրոֆ Ա.Ն. Դենիսենկոյին պարգևատրելու մասին:
9. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ Գիտական խորհրդի կազմում փոփոխությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պ. Բալայանը հայտարարեց, որ բուհն ավարտած ուսանողների փոխարեն ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ են ընտրվել հետևյալ ուսանողները.

Քոչարյան Անի Արմենի - 4-րդ կուրսի ուսանող («լեզվաբանություն և ՄՄՀ»), ՈԻԳԸ նախագահ,

Սարգսյան Անգելինա Հովհաննեսի - 4-րդ կուրսի ուսանող («ռուսաց լեզու և գրականություն»),

Կարապետյան Մարինե Մարատի - 4-րդ կուրսի ուսանող («լեզվաբանություն և ՄՄՀ»),

Սարգսյան Աիդա Արտյոմի - 2-րդ կուրսի ուսանող («ռուսաց լեզու և գրականություն»):

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Խորհրդի քարտուղար Մ.Դպիրյանը ներկայացրեց գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանը: Նիստերի ծրագրված օրակարգն ընդգրկում է ընթացիկ և եզրափակիչ քննությունների արդյունքների ամփոփում, անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը, մագիստրոսական թեմաների հաստատումը, ֆակուլտետի ընթացիկ գործունեության հետ կապված այլ հիմնական հարցերի քննարկում:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ՝ 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար ԵՊՀ անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Պ.Բալայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

Սոնա Ռաֆիկի Մհերյան ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի /ռուսաց լեզու և գրականություն/ 4-րդ կուրսի ուսանող՝ - **Վ.Քոչարյանի անվան կրթաթոշակ:**

Մարինե Մարատի Կարապետյանին ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի /լեզվաբանություն և ՄՄՀ/ 4-րդ կուրսի ուսանող՝ - **Վ. Բյուսովի անվան կրթաթոշակ:**

4. ԼՍԵՑԻՆ՝ Մոսկվայի կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմությունը՝ որպես Մոսկվայի կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակների թեկնածուներ երաշխավորել.

Ադրինե Պիվագյանին՝ բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող,

Անի Քոչարյանին՝ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող:

5. ԼՍԵՑԻՆ՝ Հաղորդում ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Խորհրդի նախագահ Պ.Բալայանը ներկայացրեց ֆակուլտետի ցերակային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության ամփոփ արդյունքները:

Մագիստրատուրա ընդունելության մասին. 9 ուսանող դիմել է մագիստրատուրա:

Բակալավրիատի ընդունելության մասին. ռուսաց լեզու և գրականություն բաժին ընդունվել է 22 ուսանող: Միջմշակութային հաղորդակցում և թարգմանություն բաժին - 14 ուսանող:

Չինաստանից ունենք 4 ուսանող:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ՝ Միասնական քննությունների ծրագրի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Խորհրդի նախագահ Պ.Բալայանը: Բազմիցս խոսել ենք ռուսաց լեզվի քննությունը մնացած օտար լեզուների քննական պահանջներին համապատասխանեցնելու մասին: Քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկներով դիմելու ենք ԿԳՄՄ նախարարություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաղորդումն ընդունել ի գիտություն:

7.ԼՍԵՑԻՆ՝ Միջազգային գիտաժողովի նախապատրաստման աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պ.Բալայանը ներկայացրեց կատարված աշխատանքները: Սպասվում է մոտ 80 գիտնականներ հեղինակավոր բուհերից շուրջ 15 պետություններից:

8.ԼՍԵՑԻՆ՝ Պրոֆ Ա.Ն. Դեհնսենկոյին պարգևատրելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միջնորդել ԵՊՀ 100-ամյակի և Հայաստանում ռուսագիտության 80-ամյակի կապակցությամբ ռուս բանասիրության ֆակուլտետի հետ երկարամյա արգասաբեր համագործակցության համար ԵՊՀ ոսկե մեդալով պարգևատրել Ռուսաստանի ժողովրդների բարեկամության համալսրանի (РГУДН) ռուս և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Ն.Դեհնսենկոյին:

9.ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դ.Գազարովան, Պ.Բալայանը:

Ամբիոններ է ուղարկվել Բարձրագույն կրթության մասին օրենքի նախագիծը: Խնդրում ենք ծանոթանալ և քննարկել:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ